ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

05.12.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/78

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 22.11.2017թ. թիվ 03/26-3/21352-17 գրությամբ «Մեվրիկար» ՍՊԸ-ին ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 15.11.2017թ. թիվ 01/61-24743 գրության հիման վրա, 22.11.2017թ. թիվ 03/26-3/21352-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Մեվրիկար» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Մեվրիկար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Մեվրիկար» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 22.11.2017թ. գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) և ճանաչվել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից: Այնուհետև եռօրյա ժամկետում Ընկերության կողմից ուղարկվել են որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը: Սակայն Պատվիրատուի կողմից ուղարկված արձանագրությունից պարզ դարձավ, որ Ընկերության որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը Պատվիրատուի կողմից չեն ստացվել:

Ընկերության կողմից վերը նշված գրությանը կից ներկայացվել է «Մեվրիկար» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստի քաղվածքը (screenshot), որի համաձայն Ընկերության կողմից փաստաթղթերն ուղարկվել են սահմանված ժամկետներում:

Ընկերությունը Խորհրդին ուղղված մեկ այլ գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-17/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.10.2017թ-ի ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3.1 կետի համաձայն՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին, իսկ նույն արձանագրության 5.1 կետի համաձայն՝ «Մեվրիկար» ՍՊԸ-ն զբաղեցրել է 1-ին տեղ:

Նույն արձանագրության 6.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացնելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Այնուհետև, 09.11.2017թ. «Մեվրիկար» ՍՊԸ-ի տնօրեն Վ. Պետրոսյանին ուղղված գրությամբ «ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-17/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար Գ. Հուրոյանը հայտնել է, որ ընկերության կողմից ներկայացրած որակավորման փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ, ուստի Ընկերությանն առաջարկվել է մեկ աշխատանքային օրում, այն է՝ մինչև 10.11.2017թ. ներառյալ, շտկել անհամապատասխանությունները և դրանք ներկայացնել գնահատող հանձնաժողովին (կցվում է):

«Մեվրիկար» ՍՊԸ-ն կատարել է պահանջված շտկումը և սահմանված ժամկետում, այն է՝ 10.11.2017թ., Գ. Հուրոյանին՝ վերջինիս պաշտոնական էլեկտրոնային հասցեով (հրավերով նշված gagik.huroyan@yerevan.am), ուղարկել է շտկված փաստաթղթերը (որպես ապացույց ներկայացվում է նամակը ուղարկելու փաստը հավաստող էլեկտրոնային էջի արտատպումը և Ընկերությունը պատրաստ է նաև նիստի ժամանակ բացել էջը և ցույց տալ ուղարկված նամակը):

Սակայն անհասկանալի պատճառներով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2017թ. նոյեմբերի 13-ին ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 1.1 կետով կայացվել է որոշում, որ իբրև թե «Մեվրիկար» ՍՊԸ-ն որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի անհամապատասխանությունը չի շտկել և գնահատող հանձնաժողովը որոշել է մասնակցի հայտը գնահատող անբավարար: Ավելին, հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշել է մերժել «Մեվրիկար» ՍՊԸ-ի հայտը և նախաձեռնել համապատասխան գործընթաց՝ անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացնել լիազոր մարմնին Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

Ընկերությունը հայտնել է, որ նշված փաստը չի համապատասխանում իրականությանը, քանի որ «Մեվրիկար» ՍՊԸ-ն որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա անհամապատասխանությունը սահմանված ժամկետում շտկել է (ապացույցները կցված են) և դրանով

կատարել «ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-17/2» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունը:

«Գնումների մասին» 2016թ. ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը գտնում է, որ «Մեվրիկար» ՍՊԸ-ն թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, ուստի խնդրում է «Մեվրիկար» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 27.11.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը 15.11.2017թ. թիվ 01/61-24743 գրությամբ հայտնել է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-17/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.10.2017թ. որոշմամբ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Մեվրիկար» ՍՊԸ-ն:

Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով, առաջարկել է Ընկերությանը սահմանված ժամկետում ներկայացնել հրավերով նախատեսված

որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը: Վերջինս ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը, սակայն ներկայացված փաստաթղթերում բացակայում էր հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրության և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմից գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը, հիմնական աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները և տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովի 09.11.2017թ. կայացրած որոշմամբ մեկ աշխատանքային օրով կասեցվել է նիստը, առաջարկելով Ընկերությանը մինչև 10.11.2017թ. ներառյալ շտկել անհամապատասխանությունը, սակայն Ընկերության կողմից այն չի շտկվել և գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.11.2017թ. կայացրած որոշմամբ Ընկերության հետագա մասնակցությունը գնման գործընթացին դադարեցվել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 27.11.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ՍՑ-ԱՄ-2017/78 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/78 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Մեվրիկար» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.10.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետի 5.1 ենթակետով կայացված որոշմամբ «Մեվրիկար» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով 03.11.2017թ. ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.11.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի 1.2 ենթակետով արձանագրվել է, որ «Մեվրիկար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի պահանջները, մեկ աշխատանքային օրյա ժամկետով կասեցրել է նիստը, իսկ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 09.11.2017թ. ոչ ավտոմատ ծանուցման եղանակով Armeps համակարգի միջոցով «Մեվրիկար» ՍՊԸ-ի «vig-petrossian@mail.ru» էլեկտրոնային փոստին ծանուցել է՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրյա ժամկետում շտկել ծանուցման մեջ նշված անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.11.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով «Մեվրիկար» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ մինչև սահմանված ժամկետի ավարտը Ընկերությունը չի շտկել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները:

5. «Մեվրիկար» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրել է Ընկերության «vig-petrossian@mail.ru» էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքը, համաձայն որի Ընկերությունը 10.11.2017թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստերի քարտուղարի «gagik.huroyan@yerevan.am» էլեկտրոնային փոստին ուղարկել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունների շտկման փաստաթղթերը:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.11.2017թ. թիվ 03/26-3/21352-17 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 15.11.2017թ. թիվ 01/61-24743 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների

բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման

արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նույն կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Մեվրիկար» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.10.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետի 5.1 ենթակետով կայացված որոշմամբ «Մեվրիկար» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով 03.11.2017թ. ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.11.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի 1.2 ենթակետով արձանագրվել է, որ «Մեվրիկար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «Մեվրիկար» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացված փաստաթղթերում բացակայում են հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրության և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմից գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը,

հիմնական աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները և տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի պահանջները, մեկ աշխատանքային օրյա ժամկետով կասեցրել է նիստը, իսկ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 09.11.2017թ. ոչ ավտոմատ ծանուցման եղանակով Armeps համակարգի միջոցով «Մեվրիկար» ՍՊԸ-ի «vig-petrossian@mail.ru» էլեկտրոնային փոստին ծանուցել է՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրյա ժամկետում շտկել ծանուցման մեջ նշված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.11.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով «Մեվրիկար» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ մինչև սահմանված ժամկետի ավարտը Ընկերությունը չի շտկել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները:

Միևնույն ժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ **«Մեվրիկար» ՍՊԸ-ի կողմից Խորհրդին ներկայացվել է Ընկերության «vig-petrossian@mail.ru» էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքը,** ***որի համաձայն նշված փոստից 10.11.2017թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի «gagik.huroyan@yerevan.am» էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել են համապատասխան փաստաթղթերը:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի***

շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Խորհուրդը գտնում է, որ «Մեվրիկար» ՍՊԸ-ն, առաջնորդվելով Կարգի 47-րդ և 48-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներով կատարել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, այն է՝ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ համապատասխան ծանուցումը ստանալուց հետո (09.11.2017թ.) սահմանված մեկ աշխատանքային օրյա ժամկետում (10.11.2017թ.) Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացրել է համապատասխան շտկումները:

Այսպիսով Խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից «ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում չեն խախտվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի պահանջները, ուստի Ընկերությանը սույն հիմքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 22.11.2017թ. թիվ 03/26-3/21352-17 գրությամբ «Մեվրիկար» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02244628) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**